

ՀՀ Արմավիրի մարզպետ
Էդվարդ Յովհաննիսյանին

Դիմում

Մեծարգո՛ւ պրն Յովհաննիսյան,

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը արդեն մոտ տասը տարի է, ինչ իր առաքելության շրջանակում իր ջանքերն է ներդնում մարզաբնակ երեխաներին հավասար կրթական հնարավորություններ ստեղծելու, ինչպես նաև նրանց ներուժը լիարժեք բացահայտելու ուղղությամբ: Հիմնադրամը վերապատրաստում է թե՛ երիտասարդ, թե՛ փորձառու մասնագետների և գործուղում նրանց Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ամենատարբեր համայնքներ՝ լրացնելու տեղի դպրոցների ուսուցիչների պակասը: Այս պահին ծրագրում են ներգրավված ավելի քան 200 ուսուցիչներ՝ մոտ 150 համայնքներում: Նշենք, որ սույն գործունեությունն իրականացվում է ՀՀ և ԱՀ ԿԳՄՍ նախարարությունների հետ համագործակցությամբ:

Կարևորելով մարզային համայնքների կայուն զարգացումը և արձանագրելով այդ ամենի հիմքում կրթության դերն ու այս պահին դասավանդող ուսուցիչների մեծ ավանդն այդ հարցում՝ հիմնադրամը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար արդեն չորրորդ տարին է, որ իրականացնում է **«Գործող ուսուցիչները՝ որպես Ուսուցիչ-առաջնորդներ»** ծրագիրը: Ծրագրի նպատակն է ներկայումս դասավանդող լավագույն մասնագետներին վերապատրաստել և զինել դասավանդման նոր մեթոդներով ու հմտություններով՝ նպատակ ունենալով խրախուսել նրանց համայնքում մնալը, և նպաստել համայնքի զարգացմանն ու աշակերտների կրթական հնարավորությունների ընդլայնմանը:

Միանալով ծրագրին՝ ընտրված ուսուցիչները մասնակցելու են մեր կողմից իրականացվող ինտենսիվ վերապատրաստումներին, որի արդյունքում դասապրոցեսը կազմակերպելու են վերափոխված մեթոդաբանությամբ, զուգահեռ իրականացնելու են նաև արտադասարանային խմբակներ և համայնքային ներազդեցության ծրագրեր:


«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից ուսուցիչները ստանալու են նաև ամսական ֆինանսական օժանդակություն:

Քանի որ ծրագրին դիմելու վերջնաժամկետը ապրիլի 30-ն է, այս համատեքստում կարևոր նշանակություն ունի ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածումը թիրախային խմբերի շրջանում: Խնդրում ենք Ձեր աջակցությունը՝ դպրոցներում և ուսուցիչների շրջանում ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը տարածելու հարցում:

Կից ներկայացնում ենք ծրագրի առավել մանրամասն նկարագրությունը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝
Ալեքսանդր
Արտաքին կապերի գծով տնօրեն



Հակոբյան

ԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ
ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ
ԲՈՒՆԻՔԻ
ՀԵՐԲՈՆԷՆԷՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Ընդլայնված պիլոտային ծրագիր

Այս ծրագրին պատասկն է ընտրել ներկայումս դպրոցներում դասավանդող լավագույն մասնագետներին, վերապատրաստել նրանց, զարգացնել հմտությունները, ծանոթացնել դասավանդման նոր մեթոդների հետ եւ խրախուսել նրանց մնալ սեփական համայնքում՝ ապահովելով կայուն զարգացում մարզային համայնքներում:

Ծրագրին կարող են մասնակցել այն ուսուցիչները, ովքեր ներկայումս դասավանդում են ստորև նշված տարածաշրջաններում:

Համայնքի և դպրոցի համապատասխանության չափորոշիչներ.

Տարածաշրջան.

- ՀՀ՝ Շիրակ, Լոռի, Տավուշ, Արագածոտն, Գեղարքունիք, Կոտայք, Արմավիր, Արարատ, Վայոց Ձորը, Սյունիք
- Արցախի Հանրապետություն

Աշակերտների թիվը.

- ՀՀ՝ առնվազն 40 աշակերտ
- ԱՀ՝ առնվազն 20 աշակերտ

Առարկաների ցանկ

Հայաստանի Հանրապետություն

Մաթեմատիկա,
Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն,
Ինֆորմատիկա,
Ֆիզկուլտուրա,
Անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն,
Հայոց լեզու և գրականություն,
Պատմություն,

Տարրական մանկավարժություն

(դասվար, ովքեր 2022 թ. սեպտեմբերին դասավանդելու են 2-րդ կամ 3-րդ դասարանում)



Մասնակցի ընտրության չափանիշները՝

- Մասնակավարժի որակավորում և դասավանդվող առարկային համապատասխան մասնագիտացում
- Ներկայումս դասավանդվող ժամերի քանակը՝ 11 և ավելին
- Տարիքը՝ < 40
- Նույն դպրոցում ծրագրի ավատրից հետո առնվազն երկու տարի մնալու հանձնառություն

Առավելությունները՝

- Սեփական համայնքները զարգացնելու հնարավորություն
- Մասնագիտական աճ
- Նորարար մտքեր եւ նախագծեր իրականացնելու ռեսուրսներ
- Դրամական օժանդակություն (ՀՀ-ում 70,000 դրամ, ԱՀ-ում 100,000 դրամ)
- Առաջնորդական հմտությունները զարգացնելու հնարավորություն
- Գաղափարակից մարդկանց հետ կապերի հաստատում

Վերապատրաստման գործընթաց՝

- Հայտադիմումի լրացում՝ www.teachforarmenia.org/application
- Մասնակցություն առցանց վեբինարի (Թեմա՝ «Նախագծային ուսումնառություն և ուսուցչի գործնական աշխատանք»)
- Ուսուցչի գործնական աշխատանք
- Անհատական հարցազրույց
- Մասնակցության առաջարկ
- Գործընկեր դպրոցների դեպքում մեր ներկայիս մասնակցի կողմից ձևաթղթի լրացում www.tfaforms.com/4951584

Դիմելու եւ ընտրության կարգը՝

Նախապատրաստական առցանց դասընթաց

Նախապատրաստական առցանց դասընթացը հնարավորություն է տալիս ապագա Ուսուցիչ-առաջնորդներին առավելապես ծանոթանալ «Դասավանդիր, Հայաստան»-ի տեսլականին, արժեքներին, առաջնահերթություններին, գործունեության սկզբունքներին, ինչպես նաև զարգացնել առաջնային այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են լինելու Առաջնորդության զարգացման ծրագրին մասնակցելու ընթացքում: Հինգ շաբաթյա այս դասընթացը նախատեսում է շաբաթական առաջադրանքեր, խմբային քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ: Ընդհանուր զբաղվածությունը կազմում է շաբաթական 3 -4 ժամ:

Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիա

Առաջնորդության զարգացման ծրագրի մեկնարկին նախորդում է Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիան, որը տեղի է ունենում յուրաքանչյուր տարի ամռանը: Հինգից յոթ շաբաթ տևողությամբ ամբողջական զբաղվածություն ենթադրող ակադեմիան ինտենսիվ դասընթացների շարք է՝ ուղղված մասնակիցների դասավանդման և նախագծերի կառավարման հմտությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը և երկամյա ծրագրի նախապատրաստմանը: Ակադեմիային զուգահեռ ընթացող աշակերտների համար նախատեսված ամառային դպրոցի շրջանակներում մասնակիցները հնարավորություն են ունենում ձեռք բերված գիտելիքները կիրառել դասարաններում և ստանալ հետադարձ կապ մեր թիմի Առաջնորդության զարգացման ղեկավարների կողմից՝ ուղղված դասավանդման արդյունատվետության բարձրացմանը:

Հարցերի դեպքում կարող եք գրել andranik.manukyan@teachforarmenia.org հասցեին կամ զանգահարել 041 530 237 հեռախոսահամարով: